

սխալ է: Այս մասին մենք առիթ կ'ունենանք խօսել մի այլ տեղ, ուստի անցնենք:

Մովսիսական օրէնքը, ճշմարիտ է, արգելում է երրորդ աստիճանի արեւակիցների պսակը, սակայն ոչ բոլոր դէպքերում, ուստի և յատկապէս թւում է այն արեւակիցներին, որոնց հետ չի կարելի ամուսնանալ. ըստ այդ օրէնքի, երրորդ աստիճանի մնացած բոլոր ազգականների հետ կարելի է ամուսնանալ: Մի կարևոր տեղեկութիւն, որ պակասում է ս. Սեդրակեանին, ու ձգում սխալ ենթադրութիւնների մէջ, որի մասին իր ժամանակին ունի ակնարկած «Ամուսնական Տարակուսանքներ» գրքի հրդիւնակը:

Շահապիւմանի կանոնն ասում է «... գջոյր կամ քեռորդի, կամ զեղբորորդի, կամ զհօրաքոյր և կամ զայլ ոք յազգին իւրում մինչև 'ի չորրորդ ծնունդն կին առնել մի իշխեսցէ»։ Թուած օրինակները երրորդ աստիճանից բարձր չեն պնդում: Վերևում հրէից և յունա-բիւզանդական օրէնքները տեսանք. արդ, եթէ ազդուել ենք նրանցից, որ բնկասկած է, համեմատական ուսումնասիրութեան եղանակն ու պարզ տրամաբանութիւնը ասում են, որ Շահապիւմանի ժողովը արգելել է երրորդ աստիճանի չհասութիւնը, ուստի և երբ ասում է «մինչև չորրորդ» խօսքերը, չորրորդն ինքը մէջը չէ և չի էլ կարող լինել:

Ինչ որ է, կան շատ տարբերութիւններ էլ, որոնց մասին աւելորդ եմ համարում գրել:

Բերածս փաստերը ցոյց տուին, որ ոչ ս. Սեդրակեանը և ոչ էլ հ. Բաստամեանը, որ առաջնի գլխաւոր աղբիւրն է, կաւելացնեմ ես, ինձ աղբիւր չէին կարող ծառայել:

Այժմ, երբ մի հեղինակի համար ասում են, որ նա այս ու այն հեղինակի հետ (Բաստամեանի և Սեդրակեանի) համեմատած նոյն ինքնուրոյնութիւնը չունի—խօսքը հայ եկեղեցու կանոնները բացատրելուն պիտի վերաբերի այստեղ—այն ժամանակ պէտք է ցոյց տալ այն աղբիւրը, որից այդ հեղինակն օգտուել է ու քաղել իր աղբիւրը»:

Արսէն վարդապետ

1905 թ., մարտի 20  
Թիֆլիս.

II

Կարդալով «Մուրճի» ներկայ տարուայ փետրուար-մարտի համարներում գերապատիւ Նիլիէ ծայրագոյն վարդապետի բացատրութիւնը այն մասին, թէ՛ «Ռ» է եղել պատճառ Լիլաւայի դպրոցների փակման 1903/4 ուսումնական տարուայ ընթաց-Ապրիլ, 1905.

ըրում և գտնելով արնտեղ իմ հասցէին ուղղուած անհիմն մեղադրանք՝ պարտք եմ համարում ներկայ գրութեամբ հերքել այն:

Ատրպատականի նախկին առաջնորդը ասում է որ ես դպրոցին պարտ եմ 500 թուման և այդ պարտքի վճարումը վեր է իմ նիւթական կարողութիւնից: Այդ մասին պատիւ ունիմ յայտնելու, որ պարտքիս դիմաց ես գրաւ էի դրել հոգաբարձութեան մօտ, օրինական վաւերագրով, իմ տունը, որ երկու երեք անգամ աւելի արժէ, քան 500 թումանը և այդ օրինական վաւերագիրը հաստատել էր իր ստորագրութեամբ ինքը գեր. Շղիշէ ծ. վ. Մուրադեանը:

Արդ, եթէ նա ինձ անվստահելի պարտապան էր համարում՝ ինչո՞ւ էր իր սեփական ստորագրութեամբ հաստատում իմ մուրհակը: Աւելորդ եմ համարում յիշատակել, որ ես միշտ իր ժամանակին վճարել եմ պարտքիս տոկոսիքներն և կարող եմ վերևում յիշուած 500 թումանը դնել հոգաբարձութեան տրամադրութեան տակ; նրա առաջին իսկ պահանջի համաձայն:

Արշակ Ղորղանեանց

1905 թիւ մարտ 26-ին  
Քաւրիզ: